

ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԴՐԱՆՑ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(ըստ դիքենսյան տեքստերի)

Յուրաքանչյուր ազգային կամ հեղինակային-գեղարվեստական լեզվի բառապաշարի մի որոշ շերտն են կազմում իրակությունները (ռեալիաները, լատ. *realis*-առարկայական)՝ նյութական մշակույթի առարկաները, այսինքն՝ դրանց անվանումները: Իրակությունները, որպես ազգամշակութային (և դրան զուգընթաց՝ լեզվամշակութային) կյանքի և ինքնության յուրատեսակ դրսևորումներ՝ բազմապիսի են և առնչվում են տվյալ էթնիկ հանրույթի կյանքի առանցքային տարրեր ուղտների՝ կացարանի, առասպելաբանական հավատալիքների, ուտեստի, կենցաղի, կրոնական, արարողակարգային, ծիսական ավանդույթների, վարչաքաղաքական ու սոցիալական կյանքի, գիտության, տեխնիկայի և այլնի հետ: Բազմաթիվ իրակություններից մշենք, օրինակ, աստվածաշնչյան (հին հրեական՝ կրոնածիսական) իրակություններից մեկը՝ Ռիխտի տապանակը, որը հատուկ ձևով, կարծր փայտից պատրաստված խորհրդանշական արկղ էր՝ ոսկեզօծ, սրբազան գետեղարան, որտեղ, Մովսեսին տրված հրահանգի համաձայն, դրվում էին աստվածային պատվիրանները՝ գրված քարե տախտակների վրա: Այն ոչ միայն նյութական, առարկայական արկղ էր, այլև Աստծո ներկայության սուրբ վայր. «Ես քեզ կը յայտնուեմ այնտեղ եւ վկայութեան տապանակի կափարիչի վրայ գտնուող երկու քերովքների արանքից քեզ հետ կը խօսեմ այն ամենի մասին, ինչ պատուիրելու եմ քեզ Իսրայելի որդիների վերաբերյալ» (Ելից, 25:22): Կարելի է խոսել նաև աստվածաշնչյան այլ իրակությունների մասին (հատուկ սպասք՝ սուրբ խորանի համար, օծության յուղ, զատկական բաղադր և այլն), որոնցից շատերը, դուրսն ինչ փոփոխված ձևով, փոխանցվել են քրիստոնյա ժողովուրդներին՝ հայտնվելով նրանց պաշտամունքային և առօրյա կյանքում, իսկ որոշ իրակություններ էլ մնացել են անցյալում կամ արտահայտություն գտել լեզվամշակույթում՝ կազմելով տվյալ լեզվի բառապաշարի ազգամշակութային շերտը: Իրակություններ ստեղծվել են տարբեր ժամանակներում՝ տվյալ ժամանակին բնորոշ հատկանիշներով:

Այստեղ տեղին է ընդգծել, որ իրակությունները, որպես մշակութային կյանքի ազգային ինքնության առարկայական դրսևորումներ, նախ ունենում են

անվանողական, ապա և այլաբերական նշանակություններ: Օրինակ, բրիտանական կենցաղային՝ ուտեստի մշակույթի դրսևորումներից մեկը՝ պուդինգը (*pudding*) իրակություն է, այն տոնածիսական, դիքենսյան արձակուժե հաճախ հանդիպող ուտեստ է, և պուդինգ ասելով առաջին հերթին հասկացվում է նրա անվանողական նշանակությունը, որի վրա էլ հիմնվում են նրա «ծեռքերովի»՝ այլաբերական նշանակությունները (փոխաբերություն, համեմատություն, դարձվածք և այլն): Այսպես, անգլերենում *pudding* բառը, զուգորդվելով այլ բառերի հետ, որոշակի համատեքստերում օժտվում է փոխաբերական իմաստներով, ինչպես՝ pudding face (լայն, գիրուկ երես), pudding head (կոպտավուն, բութ) և այլն: Նույնը կարելի է ասել նաև հայերեն *եռոհկ* բառի մասին, որը նախևառաջ նշանակում է թոնրատան առաստաղին, թոնրին ուղղահայաց բացված անցք, պատուհան: Այլաբերական իմաստավորմամբ այն կարող է նշանակել *օջախ*, *տուն* («երողը թող միշտ ծխա», «օջախդ շեն կենա»), *եյթ փակ միճակեց* («այս մարդը ճար, եյթ, այսինքն՝ երդիկ ունի»), *անելամեյի, փակ միճակ* («նա փակ մարդ է, երդիկ չունի») և այլն: Շատ ու շատ դարձվածքներ առաջացել են իրակությունների հենց այս հատկությամբ՝ այլաբերական իմաստների ծեռքերման շնորհիվ:

Ժամանակի ընթացքում կազմվել են բառարաններ՝ նվիրված իրակություններին՝ դրանց համախմբմանը, տեսակավորմանը, ստուգաբանմանը օրինակ, (լեզվաբերկրագիտությանը, հագուստին, ուտեստին և այլ ոլորտներին վերաբերող բառարաններ): Բազմատեսակ իրակությունների ընդգրկման առումով ուշագրավ են հատկապես լեզվաբերկրատական բառարանները (տես, օրինակ, «Великобритания. Лингвострановедический Словарь», 9500 единиц, М., 1978), որոնցում համախմբված իրակությունները վերաբերում են երկրի մշակութային-սոցիալական կյանքին, երկրագործությանը, կենցաղին, ազգային սովորույթներին ու կրոնածիսական պատկերացումներին, մարմնամարզությանը, կրթությանը, մյուս ոլորտներին:

Իրակությունները, բնականաբար, արտահայտություն են գտել ոչ միայն բանավոր, ժողովրդական խոսքում², այլև գրական-գեղարվեստական տեքստերում, որոնցում ազգամշակութային կյանքի այդ ցուցիչները կիրառվել են ինչպես իրենց անվանողական, իրական, այնպես էլ այլաբերական նշանակություններով ընդ որում, այլաբերական ասելով հասկացվում են այլաբերության՝ *tropos* -ի տեսակները՝ մակդիր, փոխանունություն, փոխաբերություն, այլաբանություն (ալեգորիա) և այլն):

Իրակությունները, կիրառվելով գեղարվեստական խոսքում, օրինակ Շեքսպիրի դրամաներում կամ Չ. Դիքենսի ստեղծագործություններում, ցույց են

տվել տվյալ սոցիալական հանրության կյանքը, անցյալն ու ներկան, նրա նիստուկացն ու բարքերը, հոգեբանությունը, աշխարհայացքը և այլն: Դրանք՝ այդ իրակությունները (և իրակությունների այլաբերական կիրառումները) կազմում են գեղարվեստական տեքստի այն բաղկացուցիչ տարրերը, որոնք, լինելով ազգամշակութային կյանքի յուրօրինակ դրսևորումներ, բանասերների կողմից բնորոշվել են իբրև երկի ուղղահայաց համատեքստի («Гюббенет И.В., Основы филологической интерпретации литературно-художественного текста», М., 1991) կամ գլոբալ ուղղահայաց համատեքստի («Гюббенет И.В., К вопросу о "глобальном" вертикальном контексте», М., 1980) բովանդակային տարրերից մեկը: Իհարկե, վերոհիշյալ հասկացությունների իմաստային ու բովանդակային ընդգրկումը շատ մեծ է, քանի որ խոսքը ոչ միայն ազգամշակութային կյանքի և տարբեր իրակությունների, այլև հեղինակի աշխարհայացքի, գեղագիտական հայեցակերպի (ասպեկտ), տվյալ ստեղծագործության գաղափարական ուղղվածության և բազմաթիվ այլ գործոնների մասին է, որոնցից, ինչպես ասվում է, հյուսվում է գեղարվեստական տեքստը (և այդ տեքստը կազմող լեզվական ու լեզվաոճական միավորները):

Անգլիական գեղարվեստական գրականության մեջ, Շեքսպիրից հետո, իրակությունների կիրառմամբ հատկապես հարուստ են Չ. Դիքենսի ստեղծագործությունները: Այդ բազմաթիվ ստեղծագործություններից մեզ հետաքրքրել են մասնավորապես այնպիսիք, որոնք ժամանակին թարգմանվել են հայերեն («Պիկվիկյան ակումբի հետմահվան հուշերը», Ե., 1948, «Օլիվեր Թվիստի արկածները», Ե., 1958 և այլն), քանի որ դա՝ թարգմանված լինելը, հնարավորություն է տալիս միմյանց հետ համեմատել բնագիր և թարգմանական տեքստերը, զուգադրական համեմատություն անցկացնել բնագրային ու թարգմանական իրակությունների միջև՝ որոշել դրանց թարգմանելիության աստիճանները՝ համարժեք, ոչ համարժեք, մոտավոր և այլն, ցույց տալ իմաստային և հնչերանգային ընդհանրություններն ու պարբերությունները, տվյալ իրակության ավանդականությունը, ինչպես նաև, ի վերջո, իրակությունների հեղինակային կիրառման գաղափարագեղագիտական ազդակումները (իմպուլսները), դրանց ձեռք բերած ամռանակությունները գեղարվեստական տեքստում (թե՛ բնագրում, թե՛ հայերեն թարգմանություններում): Զուգադրությունները երևան են համում իրակությունների համեմատական բնութագիրը, հնարավորություն են ընձեռնում միմյանց հետ համդիպադրել նույն իրակության քաղաքակրթական դրոշմվածքները, և ինչպես դիպուկ կերպով նշում է Ա. Ա. Բրազինան՝ «...բառը՝ երկու տարբեր ժողովուրդների մշակույթում և երկու

տարբեր լեզուներում ներկայացնելով միևնույն առարկան, անպայմանորեն ունենում են ոչ նույնական բովանդակություն, որն էլ թույլ է տալիս խոսել «ազգային իմաստների» մասին» (Брагина А. А., «Лексика языка и культура страны в лингвострановедческом аспекте», М., 1981: 18): Նման արժարժույթների համար կարող են բնորոշ օրինակ ծառայել, ասենք, «Օլիվեր Թվիստ»-ի XXII գլխի հետևյալ պարբերությունները, որոնցում առկա են նկարագրվող ժամանակին բնորոշ իրավություններ՝ դրանց դիքենսյան ընկալման յուրօրինակություններով, ինչն էլ հնարավորություն է ընձեռում՝ խոսել իրավությունների գեղարվեստական կիրառումների, այսինքն՝ դրանց գեղարվեստական արժեքավորման և «ազգային իմաստների» մասին.

"Do you hear?" cried the same voice. "There's Bill Sikes in the passage with nobody to do the civil to him: and you sleeping there as if you took laudanum with your meals, and nothing stronger. Are you any fresher now, or do you want the iron candlestick to wake you thoroughly?"

(Dickens Charles, *The adventures of Oliver Twist*, Moscow, 1955, p. 221)

-Լսո՞ւ մ ես, - գոռաց նույն ձայնը: - Սիա Բիլլ Սայքը միջանցքում է, և նրան հյուրասիրող չկա. իսկ դու այնքան խորն ես քնել, ասես ճաշիդ հետ ափիոն ես ընդունել: Լրիվ սքափվելու՞ ես, թե այս երկաթե մոմակալն էլ գործի դնեմ:

(Դիկենս Չ. Օլիվեր Թվիստի արկածները, Ե. 1958. էջ 175)

He was dressed in a smartly-cut snuff-coloured coat, with large brass buttons; an orange neckerchief; a coarse, staring, shawl-pattern waistcoat, and drab breeches. Mr. Crackit (for he it was) had no very great quantity of a reddish dye, and tortured into long corkscrew curls through which he occasionally thrust some very dirty fingers, ornamented with large common rings.

(p. 222)

Նա հագել էր մետաղաւ խոշոր կոճակներով ծխախոտագույն բարեձև ափքակ, նարնջագույն վզկապ, խայտաբղետ բաճկոն և գորշ գույնի տաբատ: Միստր Քրեքիտը (որովհետև այդ նա էր), ոչ գլխի և ոչ էլ դեմքի վրա մեծ քանակությամբ մազեր չուներ, բայց այն քիչը, որ ուներ, կարմրավուն էր և կախված էր ուսերին խցափանածն խոպոպներով, որոնց մեջ նա, ժամանակ առ ժամանակ, խրում էր հասարակ խոշոր մատանիներով զարդարված շատ կեղտոտ մատներ:

(էջ 176)

Ընդգծյալները՝ «ափիոնը՝ ճաշի հետ», «երկաթե մոմակալը», «մետաղյա կոճակները», «ուսերին կախված խցափանածն խոպոպները» և այլն, բրիտա-

նական իրականությանը, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ իրակություններ են՝ կապված Մեծ Բրիտանիայի բազմամշակութային կյանքի (օրինակ, գաղութային երկրներից վերցված սովորույթի, կենսակերպի հետ՝ «ափիոն՝ ճաշի հետ»), մետաղական իրերի մշակման, կենցաղի, հագուստի, սանրվածքի, վարսահարդարման կուլտուրայի և այլնի հետ:

Այդ ամենը դիքենսյան արձակում արտացոլվել են երկկերպ. և՛ ռեալիստորեն, ինչպես որ կան, և՛ գեղարվեստորեն, այսինքն՝ այնպես, ինչպես որ այդ իրակությունները ընկալվել են գրողի կողմից՝ որոշակի հունորով, պատկերավորությամբ, այնպիսի ցցուն արտահայտչականությամբ, որը մեզ հնարավորություն է տալիս խոսել դրանց գեղարվեստական կիրառման յուրահատկությունների և գեղագիտական նշանակության ու ազդեցության մասին:

Պետք է ասել, որ հարանման, ինչպես նաև այլաբնույթ իրականություններով հագեցած պարբերությունները շատ են թե՛ «Օլիվեր Թվիստում», թե՛ «Պիկվիլյան..... հուշերում», թե՛ մյուս գործերում, որոնց վերլուծությունը, ինչպես ցույց են տալիս նախնական դիտարկումները, հնարավորություն է ընձեռում դիքենսյան տեքստին հատուկ այնպիսի բառեր ու բառակապակցություններ, ինչպիսիք են տարաբնույթ իրակությունները, տեսնել ու գնահատել իրենց ազգա-պատմա-լեզվամշակութային խորքի, մասնավորապես՝ վիկտորիանական շրջանի Անգլիայի և, առհասարակ, իրենց ողջ գլոբալ ուղղահայաց համատեքստի մեջ: Այս առումով նշյալ իրակությունները, իրենց մշակութային, սոցիալական հնչեղությամբ հանդերձ, հաճախ վեր են ածվում խորհրդանշանների, ուստի պատկերային-կերպարային նշանակություն ունեցող շատ իրակություններ համատեքստում ձեռք են բերում նշանի արժեք (ինմտ՝ Арутюнова Н. Д., «От образа к знаку», М., 1988): Թարգմանության ժամանակ, բնականաբար, այդօրինակ «խորհրդանշանային» (կարելի է ասել՝ խորհրդանշանի արժեք ձեռք բերած կամ դրան հակամետ) իրակությունները օժտվում են տվյալ լեզվամշակութային և նրա ավանդույթներին հատուկ առնչանակություններով (коннотация): Օրինակի համար, «ուներին կախված խցահանածն խոպոպները» մոդայիկ և իր ժամանակին տարածված «ազնվականական» սանրվածքը, որն այնքան բնորոշ էր դիքենսյան շրջանի կենցաղային մշակույթին, այնքան էլ տարածված չի եղել հայ կենցաղում: Գուցես դա է պատճառը՝ հայկական կենցաղում նման «խցահանածն խոպոպների» տարածված ավանդույթ չունենալը (ընդ որում, խոսքը տղամարդկային սանրվածքի մասին է), որ «խցահանածն» երգիծական մակդիրը փոքր-ինչ անսովոր է հնչում հայերեն տեքստում, բայց և ճիշտ արտահայտում դիքենսյան բարի

հումորն ու նրան այնքան բնորոշ չափագանցումը և, այսպես ասած՝ «ոչ գրոտեսկային գրոտեսկայնությունը»:

Պետք է ասել, որ այդօրինակ գեղարվեստականացված իրականությունների թարգմանությամբ, պետք է ասել հայերենում շրջանառության մեջ են դրվել նոր հասկացություններ և բառային անսովոր, թարմ զուգորդումներ:

Ծանոթագրություններ

1. Ժամանակին բնորոշ հատկանիշներով իրեր ու առարկաներ, այսինքն՝ նյութական մշակույթի դրսևորումներ ստեղծվել են բոլոր դարաշրջաններում և դեռ ստեղծվում են: «Սովետական» շրջանում, օրինակ, ստեղծվում էին խորհրդային գիտնականների (Միչուրին, Տիմիրյազև) անուններով հայտնի գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ՝ հիմնականում ստացված պատվաստումների միջոցով (խնձոր, տանձ և այլն): Այսօր՝ XXI դ. սկզբին, տարածվում են ստացել հագուստի կամ ուտեստի բնագավառին պատկանող իրականություններ, որոնք ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի արգասիքն են, այլև իրենց զոյությամբ բնորոշում են տվյալ ժամանակաշրջանը:
2. Ժողովրդական խոսք ասելով առաջին հերթին պետք է նկատի ունենալ դարձվածքները, որոնցում շատ են իրականությունները և դրանց տարաբնույթ իմաստավորումները: Հայկական դարձվածքներում, օրինակ, առկա են այնպիսի իրականություններ, ինչպիսիք են եռոռիկը («Երեղիկը թող միշտ ծխա» են), եռկանքը («Երկանքը միշտ դառնա» են) և այլն: Այդ առումով դարձվածքների վերապահվում է «տվյալ ժողովրդի բազմակողմ մշակույթի, իրականությունների մասին հավաքագրված տեղեկությունն ամրագրելու, պահելու և փոխանցելու դերը», (տես Եղիազարյան Գ. Վ., 2005: 150):

Գրականության ցանկ

1. Բաղիկյան Խ., Դարձվածքային ոճաբանություն, Ե., ԵՅՀ, 2000.
2. Փասապարյան Ս., Սուրադյան Գ., Փասապարյան Ն., Գործառնական ոճագիտություն, Ե., ԵՅՀ, 2011.
3. Եղիազարյան Գ. Վ., Մարմի մասերով կազմված դարձվածքները հայերենում և անգլերենում, ք. գ. թ. ատենախոսություն, Ե., 2005.
4. Гюббенет И. В., К вопросу о «глобальном» вертикальном контексте, М., 1980.
5. Гюббенет И. В., Основы филологической интерпретации литературно-художественного текста, М., М., 1991.
6. Брагина А. А., Лексика и культура страны в лингвострановедческом аспекте, М., 1981.
7. Арутюнова Н. Д., От образа к знаку, М., 1988.
8. Федоров А. В., Основы общей теории перевода, М., «Высшая школа», 1983.

Աղբյուրներ և բառարաններ

1. Աստուածաշունչ, Բեյրութ, 1992.
2. Ղիկկենս, Չ., Պիկկիկյան ակումբի հետմահվան հուշերը, Ե., 1948
3. Ղիկկենս, Չ., Օլիվեր Թվիստի արկածները, Ե., 1958
4. The Holy Bible, New York, 1816.
5. Dickens Ch., The adventures of Oliver Twist, M., 1955
6. Великобритания. Лингвострановедческий словарь, М., 1978.

Realia; their literary manifestation and translation (according to texts by Dickens)

Realia as a unique manifestation of the national culture are numerous and refer to various spheres of the given ethnic community- housing, mythological beliefs, dishes, religions, ceremonial traditions, administration, science, technology and so on.

It should be noted that realia as material manifestation of the cultural life of the national identity, first have a nominative and then a metaphoric meaning. For example, pudding is a realia, which is often met in Dickens's prose and by saying pudding its nominative meaning is perceived first of all as a dish. But in combination with other words and in certain contexts this word has a metaphoric meaning as pudding face – broad, plump face, pudding head – rude, stupid person.

In English literature after Shakespeare the works by Dickens are especially rich in using realia.

The translation of realia is of special interest, because it enables to compare the original and the translated texts, and define how equivalent the translations of realia are, to show their meaning and prosodic generalities and differences as well as the connotations they acquire in literary texts both in the original and in Armenian translations.